

Մեծահասակ պացիենտների շրջանում նոզոկոմիալ և թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված թոքաբորբերի վարման կլինիկական ուղեցույց

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցի նպատակն է տրամադրել ապացուցողական խորհուրդներ առանց իմուն անբավարարության մեծահասակ պացիենտների շրջանում նոզոկոմիալ և թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված թոքաբորբերի վարման վերաբերյալ:

Մեթոդաբանություն

Սույն Ուղեցույցը մշակվել է Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության անդամների կողմից: Ուղեցույցի հիմնական գրականական աղբյուր է հանդիսացել 2016թ. Ամերիկայի վարակաբանության միության և Ամերիկայի թոքային միության կլինիկական ուղեցույցը (Management of Adults with Hospital-acquired and Ventilator-associated Pneumonia: 2016 Clinical Practice Guidelines by the Infectious Diseases Society of America and the American Thoracic Society.) ինչպես նաև Cochrane library և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Քննարկվող դրույթների վերաբերյալ կազմվել են համապատասխան PICO (Patient/Population-Intervention/Indicator-Comparator/Control-Outcome) հարցադրումներ: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության կողմից (առձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Փաստաթղթում ներկայացված են նոզոկոմիալ և թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված թոքաբորբերի սահմանումները, համաճարակաբանությունը, ախտածինների սպեկտրը, ռիսկի գործոնները, կանխարգելման հիմնահարցերը, արդի ախտորոշիչ և բուժական միջամտությունները և ելքերը: Ընդհանուր 25 PICO հարցերի վերաբերյալ ձևակերպվել են 40 խորհուրդ, որոնցից 16 դասվել են իբրև “ուժեղ”:

Հետևություններ

Ապացուցողական մոտեցումների վրա հիմնված նոզոկոմիալ և թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված թոքաբորբերի վարումը՝ դա պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված թոքաբորբ, ինտենսիվ թերապիայի բաժանմունք, ուղեցույցեր, հակաբակտերիալ բուժում, բազմակի կայուն մանրէներ, դեէսկալացիա

Պատասխանատու համակարգող

Մանգոյան Հ.Ն., բ.գ.թ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի շարունակական բժշկական կրթության ֆակուլտետի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի վերակենդանացման բաժանմունքի գիտական ղեկավար:

Աշխատանքային խումբ

- Գնունի Ա.Ս. ՀՀ ԱՆ գլխավոր անեսթեզիոլոգ-ռեանիմատոլոգ, «Նաիրի» բժշկական կենտրոնի գործադիր տնօրեն
- Մալխասյան Ի.Է. բ.գ.դ., Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի վարիչ, պրոֆեսոր
- Վարոսյան Ա.Ֆ. բ.գ.թ., Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության նախագահ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի ամբիոնի դոցենտ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի նյարդավիրաբուժության բաժանմունքի բժիշկ-անեսթեզիոլոգ
- Գաբրիելյան Լ.Մ., բ.գ.թ., «Էրեբունի» բժշկական կենտրոնի անզգայացման բաժանմունքի վարիչ, Երևան քաղաքի գլխավոր անեսթեզիոլոգ
- Անտոնյան Հ. «Աստղիկ» բժշկական կենտրոնի վերակենդանացման ծառայության ղեկավար

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է, որ 2012, 2013 և 2016 թթ. ստացել է ճանապարհային գրանտներ Ֆարմատեկ ՓԲԸ դեղագործական ընկերություննից արտասահմանում կայացող գիտաժողովների մասնակցության նպատակով: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ ՀՀ ԿԳՆ Երևանի պետական համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի կենսաբժշկության ամբիոնի վարիչ, ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի «Ապացուցողական բժշկություն» դասընթացի ղեկավար, ՀՀ ԱՆ Հանրապետական գիտաբժշկական գրադարանի «Բժշկական սեղմագրերի հայկական հանդես»-ի գլխավոր խմբագիր, «Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա»-ի նախագահ՝ Բ.Գ.Դ., պրոֆեսոր Ռուբեն Հովհաննեսյանին: Պատասխանատու համակարգողը իր շնորհակալությունն է հայտնում Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի անեսթեզիոլոգիայի և ինտենսիվ թերապիայի կլինիկական օրդինատոր Մ. Սեյրանյանին թարգմանչական աշխատանքերում ակտիվ ներգրավվածության համար:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սահմանումներ

Հարուցիչները և հակաբիոտիկների հանդեպ կայունության ռիսկի գործոնները

Ախտորոշման և բուժման սկզբունքներ

Կանխարգելման մարտավարություններ

Բուժման ելքեր և կանխատեսում

Ուղեցույցի ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված. 1 Ապացույցների որակի դասակարգում (GRADE համակարգ)

Հավելված 2. Բազմակի դեղորայքային կայունությամբ ախտածինների (Multiple Drug Resistant, MDR) առկայության ռիսկի գործոնները

Հավելված 3. Կլինիկորեն կասկածվող թոքերի արհեստական շնչառության հետ ասոցացված թոքաբորբերի էմպիրիկ հակաբակտերիալ բուժումները այն բաժանմունքների համար, որտեղ ցուցված է մետիցիլին կայուն S.aureus-ի (MRSA) և կրկնակի հակապսևդոմոնադային Գրամ-բացասական ծածկույթ

Հավելված 4. Նոզոկոմիալ թոքաբորբերի խորհուրդ տրվող մեկնարկային էմպիրիկ հակաբակտերիալ թերապիայի տարբերակները

Հապավումներ

ԲԿՇ՝ բազմակի կայունությամբ շտամներ

ՋՃ՝ զարկերակային ճնշում

ՍԿՀ՝ սրտի կծկումների հաճախականություն

ՍՇ՝ ստանդարտ շեղում

ԻԹԲ՝ ինտենսիվ թերապիայի բաժանմունք

ՀԲԹ՝ հակաբակտերիալ թերապիա

ԿԵԿ՝ կենտրոնական երակային կաթետր

ԿԵՃ՝ կենտրոնական երակային ճնշում

ՀՇ՝ համակարգչային շերտագրություն

ՆԹ՝ նոզոկոմիալ թոքաբորբ

ՇՀ՝ շնչառության հաճախականություն

ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում

ԹԱՕ՝ թոքերի արհեստական օդափոխանակություն

ԹԱՕԹ (Ventilator-associated Pneumonia, VAP)՝ թոքերի արհեստական օդափոխանակության հետ ասոցացված թոքաբորբ

ԹԱՕՏ՝ Թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված տրախեոբրոնխիտ

IDSA (Infectious Disease Society of America)՝ Ամերիկայի վարակաբանության միություն

ATS (American Thoracic Society)՝ Ամերիկայի թոքային միավորում

APACHE II (Acute Physiology and Chronic Health Ecaluation)՝ սուր ֆիզիոլոգիական և խրոնիկ առողջական վիճակի գնահատման սանդղակ

GRADE (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation)՝ Ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգում

HCAP (Healthcare-associated Pneumonia)՝ բուժման և խնամքի հետ ասոցացված թոքաբորբ

MRSA (Meticillin Resistant Staphylococcus Aureus)՝ Մետիցիլին կայուն ստաֆիլոկոկուս աուրեուս

MSSA (Meticillin Susceptible Staphylococcus Aureus)՝ Մետիցիլին զգայուն ստաֆիլոկոկուս աուրեուս

PCT պրոկալցիտոնին

1. Նախաբան

Չնայած կանխարգելման և բուժման ասպարեզներում գրանցված լուրջ առաջխաղացումներին նոզոկոմիալ (ՆԹ) և թոքերի արհեստական օդափոխության հետ կապված թոքաբորբերը (ԹԱՕԹ) շարունակում են մնալ ժամանակակից ինտենսիվ թերապիայի լուրջ մարտահրավերների ցանկում: Այս երկու ախտաբանությունները տարածվածության մասին վկայում է այն փաստը, որ միասին նրանք հանդիսանում են ներհիվանդանոցային ինֆեկցիաների առաջատարը, կազմելով վերջիններիս 22% [1]: Թոքերի արհեստական օդափոխություն (ԹԱՕ) պահանջող հիվանդների 10% մոտ զարգանում է ԹԱՕԹ և այս ցուցանիշը չի փոխվել վերջին տասնամյակի ընթացքում [2] : Այս ինֆեկցիաները բացասական են ազդում պացիենտների բուժման կարևորագույն ելքերի վրա: Այսպես, ԹԱՕԹ-ի արդյունքում առաջացած **բոլոր պատճառներից մահացությունը** (all-cause mortality) տատանվում է 20 % - ից մինչև 50%, մինչդեռ ամբողջովին նրանով պայմանավորված մահացությունը՝ 13% [3]: ԻԹԲ-ում կիրառվող հակաբիոտիկների գրեթե կեսն ուղղված է ԹԱՕԹ-ի բուժմանը: [4] Այս ախտաբանությունը ասոցացված է ահռելի տնտեսական ծախսերի և հոսպիտալիզացիայի տևողության երկարացման հետ: Համաձայն վերջին երկու հետազոտությունների տվյալների ԹԱՕԹ-ի առկայությունը երկարացրել էր ԹԱՕ-ը 7.6-11.5 օրերով և հոսպիտալիզացիան 11.5-13.1 օրերով [5,6]: Իսկ ամեն ախտորոշված պացիենտի հավելյալ ծախսերը կազմել էին մոտ \$ 40.000 դոլլար [6]:

Մինչ վերջին 5 տարիները մասնագետները առանձնացնում էին թոքաբորբերի ևս մի տեսակ, որը սահմանվում էր որպես բուժման և խնամքի հետ ասոցացված թոքաբորբ (Healthcare-associated Pneumonia, HCAP) : Ենթադրվում էր, որ այս ախտաբանությունը հանդիսանում է բուժհաստատություններում գտնվելու հետ կապակացված թոքաբորբերի

առանձին ենթատեսակ: HCAP-ի ընդգրկումը Ամերիկայի վարակաբանության ասոցիացիայի/Ամերիկայի թոքային միավորման (IDSA/ATS) 2005 թվականի ուղեցույցերի մեջ կապված էր այն մտավախության հետ, որ այս պացիենտները առողջապահական համակարգի հետ շփման հետևանքով ունեն բազմակի կայուն շտամերի (ԲԿՇ) առկայության բարձր ռիսկ: Սակայն հաջորդիվ տարիների ընթացքում այս թեզը ենթարկվեց քննադատության և վերանայման: Կուտակված ապացույցների համաձայն HCAP-ով պացիենտները չեն պատկանում ԲԿՇ-ի առկայության ռիսկի խմբին [7-11]: Ավելին, պարզվեց, որ չնայած այն փաստին, որ առողջապահական համակարգի հետ շփումը հանդիսանում է ԲԿՇ-ի ձեռքբերման ռիսկի գործոն, պացիենտի ուղեկցող բնութագրերը խաղում են որոշիչ դեր այս հարցում [7,8]: Ուստի, ուղեցույցների փորձագիտական խմբերը եկան համաձայնության այն մասին, որ նույնիսկ եթե դիտարկել HCAP-ը իբրև առանձին ախտաբանություն, ապա ավելի տրամաբանական է այն ընդգրկել արտահոսպիտալային թոքաբորբերի ուղեցույցերում: Հետևաբար, HCAP-ով պացիենտների մոտ ԲԿՇ-ի ծածկույթի հարցը առավելապես որոշվելու է պացիենտ կախյալ փաստացի առկա ռիսկի գործոններով անկախ առողջապահական կոռույցների հետ անցյալում կոնտակտից: Ելնելով վերոնշյալ պատճառներից, HCAP-ի վարումը չընդգրկվեց ներկա ուղեցույցի կազմում:

2. Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության անդամների կողմից: Տեղայնացման սկզբնաղբյուրներ է հանդիսացել Ամերիկայի վարակաբանության միության (Infectious Disease Society of America, IDSA) և Ամերիկայի թոքային միավորման (American Thoracic Society, ATS) 2016 թ. կլինիկական ուղեցույցի հիման վրա [12]: Օգտագործվել են նաև Cochrane library և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Կատարվել է բազմաբնագավառ, համակարգված գրականության որոնում օգտագործելով MEDLINE/PubMed առցանց տվյալների բազան, հավելյալ կատարելով համապատասխան հրապարակումների գրականության ցանկերի սկրինինգ: Յուրաքանչյուր որոնողական ռազմավարության նպատակն էր հայտնաբերել պատահական բաշխմամբ վերահսկավող փորձարկումներ (ՊԲՎՓ), ոչ-ՊԲՎԹ և համակարգային վերանայումներ, որոնք անդրադառնում են որոշակի գիտական հարցադրումներին: Տեղայնացման աշխատանքները իրականացվել են ըստ ADAPTE մեթոդաբանության՝ միջմասնագիտական աշխատանքային խմբի անդամների առերես հանդիպումների և հեռահար շփումների միջոցով: Ուղեցույցի բոլոր դրույթների վերաբերյալ ապահովվել է աշխատանքային խմբի բոլոր անդամների կոնսենսուս:

Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացած IDSA/ATS –ի ուղեցույցում հիմք է ընդունվել Ցուցումների ուսումնասիրման,

ստեղծման և գնահատման դասակարգման համակարգը (Grading of Recommendations Assessment, Development and Evaluation – GRADE): Համաձայն այս համակարգի տեղեկատվության որակը կարող է տատանվել շատ բարձր (A) մակարդակից մինչև շատ ցածր (D) մակարդակ [13,14]: Որակի մակարդակը որոշվում է հիմքում ընկած հետազոտությունների բնույթով՝ ամենա բարձր մակարդակը շնորհվում է պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներին (ՊԲՎՓ), մինչդեռ, փարձագետների կարծիքը կամ այլ ոչ համակարգված տեղեկատվությանը ունի ամենա ցածր որակը: GRADE համակարգը դասում է բոլոր ցուցումները որպես «ուժեղ» և «թույլ», որոնց տրվում են համապատասխանաբար «1» և «2» արժեքները (մանրամասները տես՝ Աղյուսակ 1-ում): Հաճախ աշխատանքային խմբի անդամները ձևակերպել են “ուժեղ” խորհուրդներ ցածր որակի ապացույցների պայմաններում: Դա նշանակում է, որ նրանց համոզմամբ պացիենտների մեծամասնությունը կցանկանար ստանալ տվյալ միջամտությունը/բուժումը և պատշաճ իրազեկված կլինիցիստների մեծամասնությունը կհամաձայնվեր տվյալ մոտեցման հետ:

Աղյուսակ 1.

GRADE համակարգի “ուժեղ” և “թույլ” խորհուրդների մեկնաբանումները

| | Ուժեղ խորհուրդ | Թույլ խորհուրդ |
|---------------------------------------|--|---|
| Պացիենտներ | Անհատների ճնշող մեծամասնությունը տվյալ իրավիճակում կցանկանա ստանալ այս միջամտությունը և միայն շատ քչերը կիրաժարվեն | Անհատների մեծամասնությունը տվյալ իրավիճակում կցանկանա ստանալ այս միջամտությունը, սակայն կլինեն շատերը, ովքեր կիրաժարվեն |
| Բժիշկներ | Պացիենտների մեծամասնությունը պետք է ստանա տվյալ միջամտությունը: Ուղեցուցչային խորհուրդին հետևելը կարող է դիտվել իբրև որակի ցուցանիշ և գործընթացների ինդիկատոր: Որոշմանը օգնող ֆորմալ գործիքներ հարկավոր չեն, որպեսզի պացիենտները ընդունեն իրենց արժեքներին և նախապատվություններին համահունչ որոշումներ | Հարկավոր է հիշել, որ առկա են տարբեր այլընտրանքային մոտեցումներ և պացիենտները օգնության կարիք ունեն իրենց արժեքներին և նախապատվություններին համահունչ որոշումներ ընդունելու հարցում: Կարող են հարկավոր լինել որոշմանը օգնող գործիքներ, որպեսզի պացիենտները ընդունեն իրենց արժեքներին և նախապատվություններին համահունչ որոշումներ |
| Առողջապահության կազմակերպիչներ | Խորհուրդը կարող ընդունվել իբրև քաղաքականություն կամ | Քաղաքականություն կամ ստանդարտ մշակելը կպահանջի |

| | | |
|--|-------------------------------------|--|
| | ստանդարտ գրեթե բոլոր իրավիճակներում | զգալի քննարկումներ և տարբեր շահառուների ներգրավում |
|--|-------------------------------------|--|

Բոլոր քննարկվող դրույթների վերաբերալ որակավորված որոնման մասնագետների կողմից կազմվել և փոխանցվել են աշխատանքային խմբերի փորձագետներին համապատասխան PICO (Patient/Population-Intervention/Indicator-Comparator/Control-Outcome) հարցադրումները: Այս հարցադրումները տեքստում ներկայացված են յուրաքանչյուր խորհուրդից առաջ: Անցկացվել են բոլոր պահանջվող ներքին և արտաքին վավերացման աշխատանքները: IDSA/ATS 2016 թ. ուղեցույցի աշխատանքային խմբի փանձագետները ինչպես նաև տվյալ ադապտացված ուղեցույցի պատասխանատու կարգավորողը բացահայտել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը:

Փաստաթուղթը նախատեսված է ինտենսիվ թերապևտների, անեսթեզիոլոգների, թոքաբանների, մանրէաբանների և առողջապահության կազմակերպիչների համար: Սույն Ուղեցույցը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման Անեսթեզիոլոգների և ինտենսիվ թերապևտների հայկական միության անդամների կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

3. Սահմանումներ

Ներկա փաստաթղթի աշխատանքային խումբը համարում է, որ IDSA/ATS ՆԹ-ի և ԹԱՕԹ-ի 2005 թ ձևակերպումները կլինիկորեն ընդունելի են, վայելում են համընդանուր ընդունելություն և հետևաբար կարիք չունեն խմբագրման [15]: Թոքաբորբը ձևակերպվում է իբրև **“նոր թոքային ինֆլտրատի առաջացում, որն ուղեկցվում է նրա ինֆեկցիոն բնույթի կլինիկական ապացույցներով՝ սուր առաջացած տենդ, թարախային խորխարտադրություն, լեյկոցիտոզ և օքսիգենացիայի իջեցում”**: Միևնույն ժամանակ, աշխատանքային խումբը նշում է ախտորոշման ոսկե ստանդարտի բացակայություն: 2005 թ փաստաթղթում և 2016թ. թարմացված ուղեցույցում ՆԹ-ը ձևակերպվում է **իբրև հիվանդանոց ընդունմանը հաջորդող 48 ժամերի ընթացքում առաջացող և ընդունման պահին ինկուբացիայի շրջանում չգտնվող թոքաբորբ** [12]: Իսկ ԹԱՕԹ-ը, դա ներշնչափողային ինտուբացիայից ≥ 48 ժամ անց առաջացած կամ հարաճող թոքային ինֆլտրատներն են, որոնք ուղեկցվում են ինֆեկցիայի համակարգային նշաններով (տենդ, լեյկոցիտների քնակափոփոխություններ), խորխի փոփոխություններով և պատճառաբանական հարուցիչի հայտնաբերումով:

4. Հարուցիչները և հակաբիոտիկների հանդեպ կայունության ռիսկի գործոնները

4.1 Ընդհանուր դրույթներ

Նոզոկոմիալ և թոքերի արհեստական օդափոխության հետ կապված թոքաբորբերը կարող են ունենալ լայն սպեկտրի բակտերիալ հարուցիչներ: Վիրուսները և սնկերը հազվադեպ են լինում ՆԹ և ԹԱՕԹ-ի պատճառ առանց իմուն անբավարարության անձանց մոտ [16,17]: Տարածված աէրոբ գրամ բացասական հարուցիչների օրինակներն են՝ *P. aeruginosa*, *Escherichia coli*, *Klebsiella pneumoniae* և *Acinetobacter*: Գրամ դրական մանրէների մասնաբաժինը, հատկապես մետիցիլին կայուն *S. aureus* (methicillin-resistant *S. aureus*, MRSA) արագորեն հարաճում է [18]: Այս մանրէն հատկապես տարածված է դիաբետով, վնասվածքներով պացիենտների և ԻԹԲ-ի հիվանդների մոտ [19]: Բազմամանրեային վարակների հաճախականությունը նույնպես հարաճում է առավելապես շնրառական դիստրես համախտանիշով մեծահասակների մոտ [20-22]: Նոզոկոմիալ թոքաբորբ առաջացնող բազմակի կայուն շտամերի (ԲԿՇ) տարածվածությունը տատանվում է կախված բուժաստատությունից, պացիենտների խմբերից, անցյալում հակաբիոտիկների օգտագործումից և ԻԹԲ-ի հիվանդների տեսակից: Այս փաստը թելադրում է շարունակական մանրեաբանական վերահսկման անհրաժեշտությունը [3, 6, 23, 24]:

4.2 Հակաբիոտիկների հանդեպ կայունության զարգացման ռիսկի գործոնները նոզոկոմիալ և ԹԱՕԹ-ի դեպքերում

Հակաբիոտիկների հանդեպ կայունության խնդիրները սերտորեն կապակցված են տվյալ ուղեցույցում քննարկվող կլինիկական հիմնահարցերի հետ: Ուստի մենք կատարել ենք մի շարք համակարգային վերլուծություններ և գերվերլուծություններ որպեսզի լուսաբանենք ՆԹ-ի և ԹԱՕԹ-ի պարագայում բազմակի կայուն շտամերի (ԲԿՇ) առաջացման ռիսկի գործոնները: Այս աշխատանքը չի հանգեցրել ոչ մի խորհուրդների ձևակերպման: Ավելի շուտ այն օգնել է աշխատանքային խմբի անդամներին մի շարք բուժական խորհուրդներ ձևակերպելուց: Երբ տվյալ ռիսկի գործոնի վերաբերյալ առկա էր մեկից ավելի հետազոտություն, հավաստիության ինտերվալի (Confidence Interval, CI) համար օգտագործվել է պատահական ազդեցության (random-effect) մոդելավորումը:

4.2.1 Ցանկացած տեսակի ԲԿՇ-ի ռիսկի գործոնները ԹԱՕԹ-ի դեպքում

Վերլուծության շրջանակներում ընդգրկվել են ցանկացած տեսակի MDR շտամերի ռիսկի գործոնները ԹԱՕԹ-ի դեպքում ուսումնասիրող 54 հետազոտություններ: Նրանցից 39 մերժվել են կրկնակի տպագրման, համեմատական գործոնների բացակայության և ոչ կլինիկական ուղղվածության պատճառներով: Գերվերլուծությունը ներառել է 15

հավանական ռիսկի գործոն: Հետևյալ գործոնները կապված էին նոզոկոմիալ թոքաբորբերի ժամանակ ԲԿՇ-ի ռիսկի ավելացման հետ՝

- Ներերակային հակաբիոտիկների կիրառումը վերջին 90 օրերի ընթացքում (OR 12.3; 95% CI, 6.48-23.35) [25-27]
- Ավելի քան 5 օր հոսպիտալիզացիա մինչ VAP-ի առաջանալը [26, 28-32]
- Սեպտիկ շոկի առկայությունը VAP-ի առաջացման պահին (OR, 2.01; 95%CI, 1.12-3.61) [27,33]
- Սուր շնչառական դիստրես համախտանիշ մինչ VAP-ի առաջանալը (OR, 3.1; 95% CI, 1.88-5.1) [25,27]
- Երիկամային փոխարինման թերապիա մինչ VAP-ի առաջանալը (OR, 2.5; 95% CI, 1.14-5.49) [25]

Կոման ԻԹԲ-ի ընդունման պահին ասոցացված էր բազմակի կայուն շտամերի առկայության համեմատաբար ավելի ցածր ռիսկի հետ (OR, 0.21;95% CI, 0.08-0.52) [25]: Կորտիկոստերոիդների օգտագործումը հանդիսանում էր ռիսկի գործոն միայն մեկ հետոզաոտությունում [26]: Սակայն ելնելով դեղաչափերի և տևողությունների վերաբերյալ տեղեկատվության բացակայությունից և այլ հետազոտություններում արդյունքի վերարտադրման բացակայությունից, այս գործոնը չի ընդգրկվել ցանկում:

ՀԲԹ անցյալում մշտապես դիտվել է իբրև կայուն շտամերի սելեկցիայի ռիսկի գործոն: Այն ունի երկակի ազդեցություն մանրէաբանական ֆլորայի վրա՝ նվազեցնելով հակաբիոտիկներին զգայուն գրամ դրական կոկկերի և *Haemophilus influenzae*-ով պայմանավորված նոզոկոմիալ թոքաբորբերի հավանականությունը, միաժամանակ բարձրացնում է բազմակի կայուն շտամերով պայմանավորված թոքաբորբերը, որոնց ծագումնաբանությունը մետիցիլին կայուն ստաֆիլոկոկը (MRSA) և *Pseudomonas* հարուցիչներն են [27, 34-36]: Հաճախ ԹԱՕԹ-ի մանրէաբանությունը կարող է փոփոխվել կախված տվյալ հիվանդի հիմնական ախտաբանությունից: Օրինակ՝ սեպսիսի առաջնակի գերբորբոքային ռեակցիան հաջորդող իմունանբավարարության վիճակը կարող է նվազեցնել օւզանիզմի հնարավորությունները ԲԿՇ-ի դեմ պայաքում [37]: Մեծահասակների շնչառական դիստրես համախտանիշով պացիենտների շրջանում նույնպես գրանցվում է MRSA և գլյուկոզա չֆերմենտացնող գրամ բացասական մանրէների բարձր հավանականություն [38]: Հատկանշական է ԹԱՕԹ-ի հետաձգված առաջացումը մեծահասակների շնչառական դիստրես համախտանիշով պացիենտների շրջանում ինչը բացատրվում է այս ախտաբանության դեպքերում հակաբիոտիկների վաղ կիրառմամբ: Կոմայի “պաժտպանական” ազդեցությունը ԲԿՇ-ի նկատմամբ հավանաբար բացատրվում է նեյրոտրավմայով հիվանդների մոտ ԻԹԲ ընդունման ավելի վաղ շրջանում ԹԱՕԹ-ի առաջացմամբ:

“Վաղ” և “հետաձգված” թոքաբորերի կոնցեպցիաները առաջացան 1980 –ի վերջում երբ ապացուցվեց, որ մեխանիկական օդափոխության պայմաններում գտնվող պացիենտների 50% շրջանում մոտակա 4 օրերի ընթացքում զարգանում եր ԹԱՕԹ [39]: Այս հիվանդության ախտաբանությունը հետևյալն է՝ վերին շնչուղիների ապա շնչափողի և բրոնխների գաղութավորում արտահոսափտալային շտամերով, որոնք 3-4 անց փոխարինվում են նոզոկոմիալ մանրէներով [40]: Հակաբակտերիալ կանխարգելիչ ռեժիմները ցեֆալոսպորինների 1-2 դեղաչափերով նպաստում են արտահոսափտալային մանրէներով գաղութավորման ռիսկի նվազեցմանը, ուստի վաղ առաջացող ԹԱՕԹ-ը հանդիսանում է հետագա նոզոկոմիալ շտամերով կոլոնիզացիայի ռիսկի գործոն և բարձրաձևում է հետաձգված ԹԱՕԹ-ի հավանականությունը:

Որոշ հետազոտություններ կասկածի տակ են դնում ԹԱՕԹ-ի առաջացման ժամանակի և ԲԿՇ-ի միջև գոյություն ունեցող կապը [26,28-30]: Սակայն այս աշխատանքները ունեն բազմաթիվ մեթոդաբանական թերություններ: Մենք կարծում ենք, որ վաղ և հետաձգված ԹԱՕԹ-ը քննարկելիս իբրև սկզբնական ժամանակակետ հարկավոր է ընտրել ոչ թե շնչափողի ինոտրացիան, որը կարող է տեղի ունենալ մի քանի օր անց երբ հիվանդի շնչուղիները արդեն իսկ գաղութավորվել են նոզոկոմիալ շտամերով, այլ հիվանդանոց ընդունվելու օրը: Ավելին, ԲԿՇ-ի ռիսկի գործոնների առկայությունը պետք է գերակշռի թոքաբորբի վաղ կամ հետաձգված սկզբին: Այնուամենայնիվ հետազոտությունների մեծամասնությունը ցույց է տալիս, որ ≥ 5 օրից ուշ առաջացած ԹԱՕԹ-ի ծագումնաբանությունը ամենայն հավանականությամբ բազմակի կայուն մանրէներն են:

4.2.2 Բազմակի կայուն շտամերի ռիսկի գործոնները ՆԹ-ի դեպքում

Բազմակի կայուն շտամերի ռիսկի գործոնները ՆԹ-ի պարագայում հազվադեպ են ուսումնասիրվել: Մենք վերլուծել ենք 15 այդպիսի գործոն, որոնցից միայն մեկի դեպքում հաջողվել հաստատել հավաստի կապ ԲԿՇ-ով ՆԹ-ի առաջացման հետ՝ անցյալում հակաբիոտիկների օգտագործումը (OR,5.17;95% CI, 2.11-12.67) [41,42]: Վաղ կամ հետաձգված թոքաբորբերի առումներով HAP-ի վերաբերյալ տեղկատվություն չկա:

4.2.3 MRSA ծագումնաբանությամբ ԹԱՕԹ-ի ռիսկի գործոնները

Որոշ հետազոտություններ ուսումնասիրել են հատկապես MRSA ծագումնաբանությամբ ԹԱՕԹ-ի ռիսկի գործոնները: Նրանց մեծամասնությունը գնահատել է MRSA գաղութավորման փաստը: Երեք հետազոտություններում հայտնաբերվել են 14 ռիսկի գործոններ [43-45]: Չնայած նրան որ MRSA ինֆեկցիան պայմանավորված է նաև մի շարք պացիենտ կախյալ բնութագրերով և հիմնական հիվանդության ծանրությունով, այնուամենայնիվ անցյալում հակաբիոտիկների կիրառումը համարվում է ամենա հավաստի ռիսկի գործոնը: MRSA թոքաբորբերը հիմնականում առաջանում համեմատաբար ավելի ուշ

[44]: **Գաղութավորմամբ պացիենտների ակտիվ հայտնաբերումը և ապագաղութավորումը** կարող է դրական ազդեցություն ունենալ MRSA վարակի հաճախականության նվազեցնելու հարցում: Որոշ հետազոտությունների հայտնաբերել են ուղիղ կապ MRSA գաղութավորման և հետագայում նույն հարուցիչով պայմանավորված ստորին շնչուղիների ինֆեկցիաների միջև [46,47]: Սակայն առնվազն մեկ հետազոտության արդյունքները չեն հաստատել այդ թեզը [48]: Ըստ մեր տվյալների ներկայումս գոյություն չունեն հետազոտություններ, որտեղ ուսումնասիրվել է MRSA սկրինինգի կապը էմպիրիկ հակաբակտերիալ թերապիայի հետ:

Ելնելով այս սահմանփակ տեղեկատվությունից աշխատանքային խումբը եղրահանգել է, որ MRSA վարակի ամենա հավաստի ռիսկի գործոնը շարունակում է մնալ անցյալում հակաբակտերիալ թերապիան: Քթային կամ շնչուղիների այլ հատվածներից հայտնաբերված գաղութների կանխորոշիչ արժեքը դեռ հավաստի ապացուցված չէ:

4.2.4 *Pseudomonas aeruginosa* ծագումնաբանությամբ ՆԹ/ԹԱՕԹ-ի ռիսկի գործոնները

Երկու հետազոտություններ հայտնաբերել են 7 ռիսկի գործոն *Pseudomonas aeruginosa* ծագումնաբանությամբ նոզոկոմիալ թոքաբորբերի համար [49]: Բազմակի կայունության համեմատաբար ավելի խիստ ձևակերպումներ ընտրելով կարելի է նշել հետևյալ ռիսկի գործոնները՝ անցյալում հակաբակտերիալ թերապիան, թոքերի արհեստական օդափոխությունը և թոքերի խրոնիկ օբստրուկտիվ հիվանդությունները: Չնայած առկա տեղեկատվության սահմանափակությանը ենթադրվում է, որ **կիստոզ ֆիբրոզով և բրոնխոէկտազներով** հիվանդները նույնպես պատկանում են ԲԿՇ *Pseudomonas aeruginosa* –ի առկայության ռիսկի խմբին: Հակաբիոտիկների որոշակի դասեր ասոցացված են այս շտամի սելեկցիայի կանխատեսման անկախ գործոններ՝ կարբապենեմները, լայն սպեկտրի ցեֆալոսպորինները և ֆտորիսինոլոնները: Ելնելով առկա տեղեկատվության սահմանափակ ծավալից և ցածր որակից աշխատանքային խումբը համաձայնվեց, որ միակ հավաստի ռիսկի գործոն հարկավոր է համարել անցյալում հակաբակտերիալ թերապիան:

4.2.5 *ՆԹ/ԹԱՕԹ-ի* ծագումնաբանական հեղազոտությունները

Ելնելով բազմակի կայունությամբ մանրենների հարաճուն տարածվածությունից աշխատանքային խմբի անդամները եկան համաձայնության, որ շնչուղիների արտադրության ցանքսերը հարկավոր է վերցնել ԹԱՕԹ-ի կասակծով բոլոր պացիենտներից [15]: Այս դրույթը վեայելում է համատարած համաձայնություն և աշխատանքային խմբի անդամները համարել են ավելորդ նրա ֆորմալ ընդգրկումը տվյալ ուղեցույցների խորհուրդների ցանկում:

Արյան ցանքսերի արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությունը խիստ սահմանափակ է: Սակայն ԹԱՕԹ-ով հիվանդների մոտ 15% բակտերիեմիկ են և նրանց մոտ ծագումնաբանական ախտորոշումը, հաճախ բազմակի կայունությամբ մանրենների

հայտնաբերմամբ, կարող է էականորեն փոփոխել վարման մարտավարությունը և բուժման ելքերը [50-52]: Որոշ հետազոտությունների տվյալներով բակտերիեմիկ ԹԱՕԹ-ով ապցիենտները ի համեմատ առանց բակտերիեմիայի հիվանդների բնութագրվում են ավելի բարձր մահացությամբ [51,53]: Միևնույն ժամանակ հարկավոր է գիտակցել, որ դրական ցանքսերի մոտ 25% արտաթոքային օջախներից է: Ուստի արյան ցանքսերը կարող են օգտակար լինել արտաթոքային վարակների հայտնաբերման և արդյունավետ բուժման առումով [50, 51]: Այս պատճառով աշխատանքային խմբի անդամները ուժի մեջ թողեցին 2005թ. ATS/IDSA ուղեցուցի խորհուրդները արյան ցանքսերի օգտակարության վերաբերյալ: ՆԹ-ով բակտերիեմիկ պացիենտները նույնպես հազվադեպ չեն և արյան ցանքսերը նրանց մոտ նույնպես կարող են հաղորդել կարևոր տեղեկատվություն [54]:

5. Նոզոկոմիալ և թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված թոքաբորբերի ախտորոշման և բուժման սկզբունքները

5.1 Մանրէաբանական հետազոտություններ

1. Արդյո՞ք ԹԱՕԹ-ի կասկածով ապցիենտները պետք է բուժվեն հիմնվելով միջամտական նմուշառման և քանակական ցանքսերի, թե ոչ միջամտական նմուշառման և քանակական ցանքսերի, թե ոչ միջամտական նմուշառման և կիսաքանակական ցանքսերի արդյունքների հիման վրա:

Խորհուրդ

1. **Մենք առաջարկում ենք ԹԱՕԹ-ի ախտորոշման նպատակով օգտագործել ոչ միջամտական կիսաքանակական ցանքսեր, այլ ոչ թե միջամտական կամ ոչ միջամտական քանակական մեթոդներ (Թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ, 2C) [55-59]**

Մեջբերում

Միջամտական մեթոդների օրինակներն են բրոխոսկոպիան կամ կոյր բրոնխիալ նմուշառումը (BAL, PSB) իսկ ոչ միջամտականների՝ ներշնչափողային արտաձծումը (ETAs): Ոչ միջամտական նմուշառումը տեխնիկապես ավելի դյուրին է և տնտեսապես մատչելի ի համեմատ միջամտական մեթոդների: Կիսաքանակական քննությունները ի համեմատ քանակականների խնայում են ժամանակ և պահանջում են ավելի քիչ փորձառություն: Այս պատճառներով է ղեկավարվել աշխատանքային խումբը իր պորհուրդը ձևակերպելիս:

II. Հարկավոր է արդյոք ընդհատել հակաբիոտիկները ԹԱՕԹ-ի կասկածով այն պացիենտների շրջանում, ում միջամտական քանակական ցանքսերի պատասխանները ԹԱՕԹ-ի ախտորոշման համար սահմանված շեմից ցածր են:

Խորհուրդ

- 1. Ոչ միջամտական նմուշառումը կիսաքանակական ցանքսով ԹԱՕԹ-ի ախտորոշման ընտրության մեթոդն է: Սակայն աշխատանքային խումբը հասկանում է, որ որոշ բժիշկներ կարող են նախընտրել միջամտական քանակական տարբերակը: Այս պարագայում առաջարկվում է ԹԱՕԹ-ի ախտորոշման համար սահմանված շեմից ցածր աճի մակարդակը օգտագործել իբրև հակաբիոտիկի դադարեցնելու հիմք: (Թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D) [56, 60,]**

Նախապատվություններ և արժեքներ

Այս խորհուրդը բարձր արժեք է շնորհում անհիմն վնասից և ծախսերից խուսափելու գաղափարին:

Մեջբերում

Հարկավոր է հաշվի առնել նաև հակաբիոտիկների դադարեցնելու որոշման վրա ազդող կլինիկական գործոնները՝ այլընտրանքային վարակի օջախի հավանականությունը, անցայլում հակաբակտերիալ թերապիան, ծանր սեպսիսի նշանները, կլինիկական բարելավման նշանները և այլ

III. Արդյո՞ք ՆԹ-ով կասկածով պացիենտների վարումը պետք է հիմնվի շնչառական նմուշների մանրէաբանական քննության արդյունքների վրա թե կարող է կատարվել էմպիրիկ

Խորհուրդ

- 1. Մենք առաջարկում ենք կասկածվող ՆԹ-ով պացիենտներին վարել հիմնվելով ոչ միջամտական ճանապարհով ձեռքբերված մանրէաբանական նմուշներին այլ ոչ թե էմպիրիկ մարտավարությանը (Թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D) [61-63]**

Նախապատվություններ և արժեքներ

Այս առաջարկը արժեվորում է շնչառական կամ արյան ցանքսերի հիման վրա թիրախային հակաբակտերիալ թերապիայի կազմակերպման հնարավորությունը: Նմուշառումից խուսափելով ռեսուրսների տնտեսմանը տրվում է ցածր արժեք:

Մեջբերում

Շնչուղիների նմուշառման ոչ միջամտական տարբերակներն են՝ իքնուրույն խորխի տարհանումը, խորխարտադրության դրդումը, նազոփրախեսալ արտածումը և ներշնչափաղային արտածումը: Աշխատանքային խումբը գիտակցում է, որ կարող են լինել հանգամանքներ երբ ոչ միջամտական տարբերակները հնարավոր չի լինի կիրառել և նմուշառումը կկատարվի միջամտական եղանակով:

5.2 Բիոմարկերների և թոքային ինֆեկցիայի կլինիկական սանդղակ

IV. ՆԹ/ԹԱՕԹ –ով պացիենտների մոտ հակաբիոտիկ սկսելու որոշմում կայացնելիս պետք է հիմնվել միայն կլինիկական ցուցանիշների վրա թե՛ շիճուկի պրոկալցիտոնինի (PCT) և կլինիկական նշանների համակցման վրա

Խորհուրդ

1. **ՆԹ/ԹԱՕԹ–ով պացիենտների մոտ հակաբիոտիկ սկսելու որոշմում կայացնելիս մենք խորհուրդ ենք տալիս հիմնվել միայն կլինիկական ցուցանիշների վրա այլ ոչ թե շիճուկի պրոկալցիտոնինի և կլինիկական նշանների կոմբինացիայի (Ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ, 1B) [64-75]**

V. ՆԹ/ԹԱՕԹ–ով պացիենտների մոտ հակաբիոտիկ սկսելու որոշում կայացնելիս արդյո՞ք պետք է հիմնվել միայն կլինիկական ցուցանիշների վրա, թե բրոնխոալվելոյալ լավաժի հեղուկում (BALF) միելոիդ բջիջների լուծվող ընկալիչների (sTREM-1) արժեքների և կլինիկական ցուցանիշների համակցման վրա

Խորհուրդ

1. **ՆԹ/ԹԱՕԹ –ով պացիենտների մոտ հակաբիոտիկ սկսելու որոշմում կայացնելիս մենք խորհուրդ ենք տալիս հիմնվել միայն կլինիկական**

ցուցանիշների վրա այլ ոչ թե BALF sTREM-1 արժեքները կլինիկական ցուցանիշների հետ մեկտեղ (Ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ, 1B) [76-78]

VI. ՆԹ/ԹԱՕԹ –ով պացիենտների մոտ հակաբիոտիկ սկսելու որոշում կայացնելիս արդյո՞ք պետք է հիմնվել միայն կլինիկական ցուցանիշների վրա թե սպիտակուց C-ի (CRP) արժեքների և կլինիկական ցուցանիշների համակցման վրա

խորհուրդ

- 1. ՆԹ/ԹԱՕԹ –ով պացիենտների մոտ հակաբիոտիկ սկսելու որոշում կայացնելիս մենք խորհուրդ ենք տալիս հիմնվել միայն կլինիկական ցուցանիշների վրա այլ ոչ թե C ռեակտիվ սպիտակուցի (CRP) կլինիկական ցուցանիշների հետ մեկտեղ (Թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D) [71, 79, 80]**

VII. ՆԹ/ԹԱՕԹ –ով պացիենտների շրջանում հակաբիոտիկ սկսելու որոշում կայացնելիս արդյո՞ք պետք է հիմնվել միայն կլինիկական ցուցանիշների վրա թե մոդիֆիկացված թոքային ինֆեկցիաների սանդղակի (Clinical Pulmonary Infection Score, CPIS) արժեքների և կլինիկական ցուցանիշների համակցման վրա

խորհուրդ

- 1. ՆԹ/ԹԱՕԹ –ով պացիենտների շրջանում հակաբիոտիկ սկսելու որոշում կայացնելիս մենք խորհուրդ ենք տալիս հիմնվել միայն կլինիկական ցուցանիշների վրա այլ ոչ թե CPIS սանդղակի և կլինիկական ցուցանիշների համակցման վրա (Թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D) [81-85]**

5.3 Թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված տրախեոբրոնխիտի (Ventilator associated tracheobronchitis, VAT) բուժումը

VII. Արդյո՞ք թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված տրախեոբրոնխիտի ժամանակ պետք է նշանակել հակաբիոտիկներ

Խորհուրդ

1. Թոքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված տրախեոբրոնխիտի (ԹԱՕՏ) ժամանակ մենք առաջարկում ենք նշանակել հակաբարտերիալ թերապիա (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ, 2C) [86-89]

Մեջբերում

ԹԱՕՏ-ը ձևակերպվում է իբրև առանց այլ ակնհայտ պատճառի տենդ, նոր առաջացած կամ ուժեղացած խորխարտադրություն, շնչուղիների ցանքսի դրական պատասխաններ ($\geq 10^6$ CFU/մլ) առանց նոզոկոմիալ թոքաբորբի մասին վկայող ճառագայթաբանական նշանների: Համաձայն կուրակված տեղեկատվության ԹԱՕՏ-ի ՀՐՏ-ն հանգեցնում է ԹԱՕ տևողության կրճատման, սակայն միջխմբային տարբերություններ ԻԹԲ-ում անցկացված օրերի քանակի կամ մահացության առումներով բացակայում են:

Աշխատանքային խմբի փորձագետները գնահատելով ՀՐՏ-ի դրական և բացասական (մանրէների կայունության զարգացում, կողմնակի ազդեցություններ և ծախսեր) ազդեցությունները եկավ եզրահանգման, որ վերջիններս գերակշռում են: Փորձագետները ընդունում են, որ որոշ պացիենտների մոտ ԹԱՕՏ-ը կարող է բերել լորձային խցանների առաջացման և արհեստական օդափոխության սարքից անջատվելու դժվարությունների: Այս պացիենտների մոտ ՀՐՏ-ն հավանաբար կլինի օգտակար, սակայն այս դրույթի ուղիղ ապացույցներ ներկայումս զույլություն չունեն: Միևնույն ժամանակ, փորձագետները գիտակցում են, որ տեղում կատարվող ռենտգեն հետազոտությունների զգայունությունը և սպեցիֆիկությունը զիջում են համկարգչային շերտագրության կամ դիաֆերձման տվյալներին: Այդ պատճառով սուր առաջացախնչատական ինֆեկցիայի նշանների (թարախային խորխ և բարձր որակի շնչուղիների ցանքսի դրական տվյալներ), վարակի համակարգային արտահայտումների և օքսիգենացիայի խանգարումների/արհեստական շնչատական սաչքի ցուցանոշների փոփոխությունների պարագայում կարելի է քննարկել հակաբակտերիալ թերապիան նույնիսկ նոր ինֆիլտրատների բացակայության պայամաններում: Այս մարտավարության հիմքում ընկած է տվյալ պացիենտների մոտ VAP-ի առկայության բարձր ռիսկը:

5.4 **Թորքերի արհեստական օդափոխության հետ ասոցացված և նոզոկոմիալ թորքաբորբերի առաջնային բուժման սկզբունքները**

IX. Արդյոք էմպիրիկ հակաբակտերիալ թերապիայի ռեժիմների ընտրությունը պետք է ողորդվի հակաբիոտիկների հանդեպ կայունության տեղային տեղեկատվությամբ

1. **Մենք խորհուրդ ենք տալիս, որպեսզի բոլոր բուժհաստատությունները պլանային կարգով ստեղծեն և տարածեն հակաբակտերիալ դեղորայքի հանդեպ զգայունության ներքին տեղեկատվական բազա: Լավագույն տարբերակը կլինի եթե այդ փաստաթուղթը ընդգրկի նաև ԻԹԲ-ի տվյալները [90-92]**
2. **Մենք խորհուրդ ենք տալիս, որպեսզի էմպիրիկ ՀԲԹ-ի տարբերակները որոշվեն ԹԱՕԹ-ի հարուցիչների հակաբիոտիկների հանդեպ զգայունության և կայուն շտամերի տեղային բնութագրերով և տարածվածությամբ [90-93]**

Մեջբերում

Հարուցիչների տեղային տարածվածության պատկերների թարմացումների հաճախականությունը պետք է որոշի տվյալ բուժհաստատությունը ելնելով տվյալ միջավայրի առանձնահատկություններից և առկա ռեսուրսներից: Միևնույն ժամանակ փորձագետների խումբը գիտակցում է, որ այդպիսի հակաբիոգրամմա ոչ միշտ է, որ հնարավոր է ունենալ տարբեր երկրների բուժհաստատություններում: Այս պայամաններում կարելի է հիմնվել մեծածավալ ազգային կամ միջազգային հետազոտությունների տվյալների վրա: Պետք է օգտվել այն վերլուծություններից, որոնց պայամանները հնարավորինս մոտ են տվյալ երկրին կամ հիվանդանոցին:

X. Ո՞ր հակաբիոտիկներն են խորհուրդ տրվում կլինիկորեն կասկածվող ԹԱՕԹ-ի բուժման շրջանակներում

Խորհուրդ

1. **ԹԱՕԹ-ի կասկածով պացիենտների մոտ մենք խորհուրդ ենք տալիս էմպիրիկ հակաբակտերիալ թերապիայում ընդգրկել *S.aureus*-ի, *P.aeruginosa*-ի և այլ Գրամ բացասական մանրէների դեմ ակտիվ հակաբիոտիկներ (ուժեղ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ, 1C) [94,95,]**

- 1.1 Մենք խորհուրդ ենք տալիս էմպիրիկ ՀԲՏ-ում ընդգրկել MRSA հանդեպ ակտիվ հակաբիոտիկ միայն հետևալ դեպքերում՝ տվյալ մանրէի առկայության ռիսկի գործոններ*, բաժանմունքում $\geq 10\text{-}20\%$ S.aureus շատմերը մետիցիլին կայուն են, MRSA տարածվածությունը բաժանմունքում հայտնի չե (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D)
- 1.2 Մենք խորհուրդ ենք տալիս էմպիրիկ հակաբակտերիալ թերապիայում ընդգրկել MSSA (ոչ MRSA) հանդեպ ակտիվ հակաբիոտիկ տվյալ մանրէի առկայության ռիսկի գործոնների բացակայության և այն բաժանմունքներում որտեղ $\leq 10\text{-}20\%$ S.aureus շատմերն են մետիցիլին կայուն (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D)

**Քազմակի դեղորայքային կայունությամբ ախտածինների առկայության ռիսկի գործոնները տես՝ Հավելված 2.*

2. MRSA էմպիրիկ ծածկույթի ցուցման դեպքում մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել վանկոմիցին կամ լինեզոլիդ (ուժեղ խորհուրդ, միջին որակի ապացույցներ, 1B) [96-99]
3. MSSA (ոչ MRSA) էմպիրիկ ծածկույթի ցուցման դեպքում մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել պիպերացիլին-տազոբակտամով, ցեֆեպիմով, լևոֆլոքսացինով, իմիպենեմով կամ մերոպենեմով ռեժիմներ (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D): Օքսացիլինը, նաֆցիլինը կամ ցեֆազոլինը հաստատված MSSA-ի բուժման նախընտրության դեղորայքն են, սակայն `էմպիրիկ ռեժիմներում վերոնշյալ հակաբիոտիկների կիրառման դեպքում նրանց անհրաժեշտությունը չկա:
4. ԹԱՕԹ-ի կասկածով պացիենտների մոտ մենք առաջարկում ենք էմպիրիկ ՀԲԹ-ում ընդգրկել 2 հակապսևդոմոնադային հակաբիոտիկ միայն հետևալ պացիենտների դեպքում՝ հակաբիոտիկների հանդեպ կայունության ռիսկի գործոնների առկայություն, բաժանմունքում $\geq 10\%$ Գրամ բացասական շտամերը կայուն են մոնոթերապիայի համար նախատեսվող դեղորայքի հանդեպ և երբ տվյալ ԻԹԲ-ի մանրենների տարածվածության և կայունության պատկերները հայտնի չեն (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D)* [100-104]

**ՀԲԹ-ի տարբերակները տես՝ Հավելված 3-ում*

5. **ԹԱՕԹ–ի կասկածով պացիենտների մոտ մենք առաջարկում ենք էմպիրիկ ՀԲԹ-ում ընդգրկել մեկ հակապսևդոմոնադային հակաբիոտիկ երբ չկան հակաբիոտիկների հանդեպ կայունության ռիսկի գործոններ, բաժանմունքում $\leq 10\%$ Գրամ բացասական շտամերը կայուն են մոնոթերապիայի համար նախատեսվող դեղորայքի հանդեպ (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ, 2C)**
6. **ԹԱՕԹ–ի կասկածով պացիենտների մոտ բավարար Գրամ բացասական ծածկույթով այլընտրանքային հակաբիոտիկների առկայության դեպքում մենք առաջարկում ենք խուսափել ամինոգլիկոզիդների օգտագործումից (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ, 2C)**
7. **ԹԱՕԹ–ի կասկածով պացիենտների մոտ բավարար Գրամ բացասական ծածկույթով այլընտրանքային հակաբիոտիկների առկայության դեպքում մենք առաջարկում ենք խուսափել կոլիստինի օգտագործումից (թույլ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ, 2C)**

Մեջբերում

Հակաբիոտիկների հանդեպ կայունության ռիսկի գործոնները ներկայացված են Աղուսյակ 2-ում: 10-20% շեմի ընտրությունը հակա MRSA հակաբիոտիկների և 10% շեմ մեկ կամ երկու հակապսևդոմոնադային հակաբիոտիկների օգտագործման համար ընտրվել էին աշխատանքային խմբերի կողմից այն նպատակով, որ պացիենտների առնվազն 95% ստանա ադեկվատ էմպիրիկ բուժում: Տարբեր ԻԹԲ-ը կարող են փոփոխել այս շեմերը համաձայն տեղային պայմանների: Երբ առկա է թոքերի կառուցվածքային հիվանդություն (բրոնխոէկտազներ, կիստոզ ֆիբրոզ), որն ավելացնում է ծագումնաբանական Գրամ բացասական մանրէների հավանականությունը հարկավոր է օգտագործել երկու հակապսևդոմոնադային հակաբիոտիկ:

Միջազգային տվյալների համաձայն ԹԱՕԹ-ի զգալի քանակության դեպքերում պատճառաբանական մանրէներն են՝ MRSA և հակաբիոտիկների հանդեպ կայուն Գրամ-բացասական հարուցիչները: Եթե տեղային մանրէաբանական տվյալները էականորեն չեն տարբերվում վերոնշյալներից ապա խորհուրդ է տրվում էմպիրիկ ծածկույթում ընդգրկել MRSA-ի և Գրամ-բացասական մանրէների (ներառյալ P. aeruginosa-ի) դեմ ակտիվ առնվազն երկու հակաբիոտիկներ: Այս մարտավարության նպատակն է ապահովել բուժման առավելագույն հնարավոր արդյունավետություն: Միևնույն ժամանակ եթե

տեղային տվյալները վկայում են MRSA և հակաբիոտիկների գանդեպ կայուն շտամների ցածր տարածվածություն կարելի է սկսել էմպիրիկ թերապիան մեկ հակաբիոտիկով, որը ակտիվ է *P.aeruginosa*-ի և MSSA մանրէների դեմ [102]:

Էմպիրիկ ՀԲԹ-ն պետք է ուղորդվի պացիենտի յուրահատուկ ռիսկի գործոններով և տվյալ բուժհաստատության կամ բաժանմունքի միջավայրին բնորոշ մանրէաբանական բնութագրերով: Ոչ բոլոր պացիենտներն են պահանջում առավելագույն էմպիրիկ ծածկույթ: Ռիսկի գործոնների դրական կանխորոշիչ արժեքները բարձր չեն, ուստի կլինիցիստը էմպիրիկ ռեժիմներ ընտրելիս պետք է նաև գնահատի կայուն շտամների տեղային տարածվածությունը: Որոշ դեպքերում երբ տեղային կայուն շտամների տարածվածությունը բարձր է նույնիսկ առանց ռիսկի գործոնների պացիենտին կարող է հիմնավորված լինի MRSA ծածկույթ ապահովելը:

XI. Արդյո՞ք ՆԹ-ի էմպիրիկ ՀԲԹ-ի ռեժիմների ընտրությունը պետք է ողորդվի հակաբիոտիկների հանդեպ կայունության տեղային տեղեկատվությամբ

Խորհուրդ

1. **Մենք խորհուրդ ենք տալիս, որպեսզի բոլոր բուժհաստատությունները պլանային կարգով ստեղծեն և տարածեն հակաբակտերիալ դեղորայքի հանդեպ զգայունության ներքին տեղեկատվական բազա: Լավագույն տարբերակը կլինի եթե այդ փաստաթուղթը հատուկ հասցեագրված լինի տվյալ հաստատության նոզոկոմիալ թոքաբորբերին [105-107]:**
2. **Մենք խորհուրդ ենք տալիս, որ նոզոկոմիալ թոքաբորբերի էմպիրիկ հակաբակտերիալ ռեժիմները հիմնված լինեն տեղային մանրէաբանական տվյալների վրա՝ մանրէների տարածվածության և հակաբակտերիալ դեղորայքի հանդեպ նրանց կայունության [108-111]:**

Մեջբերում

Հարուցիչների տեղային տարածվածության պատկերների թարմացումների հաճախականությունը պետք և որոշի տվյալ բուժհաստատությունը ելնելով տվյալ միջավայրի առանձնահատկություններից, կուտակված տեղեկատվության ծավալից և առկա ռեսուրսներից:

X. Ո՞ր հակաբիոտիկներն են խորհուրդ տրվում կլինիկորեն կասկածվող նոզոկոմիալ թոքաբորբի բուժման համար

խորհուրդ*

1. ՆԹ-ի էմպիրիկ հակաբակատերիալ թերապիայում մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել *S. aureus*-ի նկատմամբ ակտիվ հակաբիոտիկներ (ուժեղ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 1D) [112 - 116]

- 1.1 ՆԹ-ի էմպիրիկ հակաբակատերիալ թերապիայում մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել հակա MRSA ակտիվությամբ հակաբիոտիկ այն ապցիենտների մոտ ովքեր ունեն MRSA առկայության դիսկի գործոններ՝ հակաբիոտիկների ընդունում վերջին 90 օրերի ընթացքում, հոսպիտալիզացիա բաժանմունքում, որտեղ *S.aureus*-ի $\geq 20\%$ մետիցիլինի հանդեպ կայուն է, մահացության բարձր դիսկ (HAP-ի կամ սեպտիկշոկի հետևանքով առաջացած շնչառական օգնության կարիք) և երբ տվյալ ԻԹԲ-ի մանրէների տարածվածության և կայունության պատկերները հայտնի չեն (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ)
- 1.2 ՆԹ-ով պացիենտների մոտ երբ առաջանում է MRSA ծածկույթի կարիք մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել վանկոմիցին կամ լինեզոլիդ այլ ոչ թե այլ հակաբիոտիկներ (ուժեղ խորհուրդ, ցածր որակի ապացույցներ)
- 1.3 ՆԹ-ավ ապցիենտների մոտ, ովքեր ունեն մահացության ցածր դիսկ և չունեն MRSA դիսկի գործոններ, մենք խորհուրդ ենք տալիս օգտագործել հակա MSSA ակտիվությամբ հակաբիոտիկ: MSSA էմպիրիկ բուժման ընտրության հակաբիոտիկներն են՝ պիպերացիլին-տազոբակտամը, ցեֆեպիմը, լևոֆլոկսացինը, իմիպենեմը և մեռոպենեմը: Օքսացիլինը, նաֆցիլինը կամ ցեֆազոլինը հաստատված MSSA-ի բուժման նախընտրության դեղորայքն են, սակայն HAP-ի էմպիրիկ ռեժիմներում վերոնշյալ հակաբիոտիկների կիրառման դեպքում նրանց անհրաժեշտությունը չկա: (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ)

2. ՆԹ-ի էմպիրիկ թերապիայում մենք խորհուրդ ենք տալիս կիրառել P.aeruginosa-ի և այլ Գրամ բացասական մանրէների դեմ ակտիվությամբ օժտված հակաբիոտիկներ (ուժեղ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 1D)

- 2.1 ՆԹ-ի կասկածով պացիենտների մոտ, որոնք ունեն P.aeruginosa-ի առկայության ռիսկի գործոններ կամ մահացության բարձր ռիսկ մենք առաջարկում ենք էմպիրիկ հակաբակտերիալ թերապիայում ընդգրկել 2 տարբեր դասերի հակապսևդոմոնադային հակաբիոտիկ (թույլ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 2D) ՆԹ-ով բոլոր այլ պացիենտներին կարելի է նշանակել մեկ հակապսևդոմոնադային հակաբիոտիկ
- 2.2 Մենք խորհուրդ չենք տալիս օգատգործել ամինոգլիզոլները իբրև ՆԹ-ի էմպիրիկ հակապսևդոմոնադային մոնոթերապիա (ուժեղ խորհուրդ, շատ ցածր որակի ապացույցներ, 1D)

Մեջբերում

